



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

««ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ (ՊԱՀՈՒՍՏԱՖՈՆԴԻ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՈՒ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 2052-Ն ՈՐՈՇՄԱՆ 14-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով ««Հայնախագիծ» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 2052-Ն որոշման 14-րդ կետի «ա» ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2022 թվականի դեկտեմբերի 2-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Հայնախագիծ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ դիմող) դիմումը, որով դիմողը խնդրել է.

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ. ՀՕ-165-Ն օրենքով) 18-րդ հոդվածի 1-ին մասը, դրան համապատասխան՝ Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» . N 2052-Ն (ուժը կորցրել է 01.01.2018թ. ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1373-Ն որոշմամբ) որոշման 14-րդ կետի «ա» ենթակետը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ճանաչել 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասին և 83.5-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչպես նաև 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 60-րդ (փոխկապակցված 78-րդ հոդվածի հետ) և 59-րդ (փոխկապակցված 75-րդ հոդվածի հետ) հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/7257/05/14 վարչական գործի դատավարական նախապատմությունը՝ դիմողը փաստում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018թ. ՀՕ-165-Ն օրենքով, այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» . N 2052-Ն որոշման (ուժը կորցրել է 01.01.2018թ.՝ ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1373-Ն որոշմամբ, այսուհետ՝ Որոշում) 14-րդ կետի «ա» ենթակետը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, խախտում են իր՝ Սահմանադրության 59-րդ հոդվածով երաշխավորված տնտեսական գործունեության ազատությունը, ինչպես նաև 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը, քանի որ իր վրա դրվում է հակա-

սահմանադրական պարտավորություն՝ վճարելու որոշակի գումար, որի վճարման պարտականություն ինքը չունի:

Դիմողի պնդմամբ՝ վերոգրյալի հետևանքով խախտվում են նաև 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը և 83.5-րդ հոդվածի 2-րդ կետը՝ այնքանով, որքանով ՀՀ կառավարությունը սահմանել է անձի սեփականության և տնտեսական գործունեության ազատության նկատմամբ միջամտություն իրականացնող դրույթներ՝ չունենալով համապատասխան լիազորություն:

Ըստ դիմողի՝ օրենքի վերապահման սկզբունքը ենթադրում է, որ կան որոշակի բնագավառներ, որոնց կարգավորումը վերապահվում է բացառապես օրենսդիր մարմնին: Այսինքն՝ տվյալ բնագավառներում գործադիր իշխանությունը չի կարող ընդունել ինքնուրույն կարգավորումներ: Դիմողի պնդմամբ՝ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունքների սահմանափակման նպատակով նախ պետք է ընդունվեն օրենքներ, որպեսզի միջամտությունը հնարավոր լինի ձևական առումով արդարացնել: Դիմողն ընդգծում է, որ այս առումով «(...) զուտ բլանկետային օրենքի առկայությունը, որով բովանդակային կարգավորում ընդունելու լիազորությունը տրվում է գործադիր իշխանությանը, բավարար չէ: Թե՛ 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը (5-րդ հոդվածի 2-րդ պարբերություն), և հատկապես թե՛ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը (6-րդ հոդվածի 2-րդ մաս) ելնում է այն գաղափարից, որ գործադիր իշխանությունը կարող է գործել միայն օրենքի առկայության դեպքում, խորհրդարանի կողմից ընդունված օրենքի լիազորմամբ»:

Դիմողը նշում է, որ «(...) օրենսդիրը, եթե որոշակի կարգավորումների ընդունման լիազորությունը ցանկանում է փոխանցել գործադիր իշխանությանը, ապա նա պարտավոր է նախապես ամրագրել դրա բովանդակությունը, նպատակը և ծավալը»: Տվյալ պարագայում, ըստ դիմողի՝ «օրենսդիրն ակնհայտորեն լիազորել է Կառավարությանն ընդունելու անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համապատասխան կարգ, բայց ոչ դեպքեր, նախապայմաններ կամ չափեր: Վերջինիս համար, 2005

թվականի խմբագրությամբ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի համաձայն, լիազորված է միայն օրենսդիրը»:

Դիմողն ընդգծում է, որ առավելագույնը, որն օրենսդիր մարմինը կարող էր պատվիրակել Կառավարությանը, միայն ձևական իմաստով կարգի սահմանումն է առ այն, թե, օրինակ, ինչպես պետք է համապատասխան փաստաթղթերը լրացվեն, կամ սահմանվեն դիմումների ներկայացման գրավոր կամ էլեկտրոնային ձևեր, որոշակի ընթացակարգերի մասնակցության հնարավորություն և այլն:

Ըստ դիմողի՝ սույն գործով Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը սահմանադրաիրավական տեսանկյունից անընդունելի է, քանի որ քաղաքացու սեփականության իրավունքը սահմանափակվում է առանց որևէ լեգիտիմ նպատակի առկայության: Դիմողի պնդմամբ՝ «անձին (հարկային) պատասխանատվության ենթարկելը ենթադրում է ոչ իրավաչափ արարքի և մեղքի առկայություն, որի արդյունքում վրա են հասնում որոշակի բացասական հետևանքներ կամ առնվազն ստեղծվում է դրա վտանգը: Սույն դեպքում Դիմողի կողմից վերոնշյալ նախապայմաններից որևէ մեկը չի իրականացվել: Ավելին, Դիմողը տվյալ պարագայում համապատասխան գումարը ներառել է իր համախառն եկամտի մեջ և վճարել է հարկերը»:

Դիմողը փաստում է, որ «օրենսդիր և գործադիր իշխանությունները՝ Օրենքի և Որոշման միջոցով սահմանել են համապատասխան ընթացակարգեր՝ համախառն եկամտից անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքը նվազեցնելու և այդպիսով անհարկի չհարկվելու ընթացակարգը: Վճռաբեկ դատարանը, սակայն, վերոգրյալում ներկայացված իրավակիրառ պրակտիկայում տրված իր մեկնաբանությամբ շեղվել է օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից սահմանված արդյունավետ ընթացակարգից՝ ըստ էության սահմանելով, որ «Գումարի բռնագանձման վերաբերյալ վճիռ է համարվում ցանկացած վճիռ, բացառությամբ, եթե վճռի արդյունքում գործարքը ճանաչվում է առոչինչ»»:

Ամփոփելով՝ դիմողը եզրահանգում է, որ Օրենքը և Որոշումը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված հակասահմանադրական մեկնաբանությամբ, խախտում են իր տնտեսական գործունեության ազատությունը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

3.1. Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքները և ազատությունները փարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:*

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված դեպքում Սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 74-րդ հոդվածին համապատասխան:*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված **այլ դեպքերում***:

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, **երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է***:

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ***Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը չի ենթադրում անձի՝ իր հայեցողությամբ այդպիսի պաշտպանության ցանկացած միջոցի կամ ընթացակարգի ընտրության հնարավորություն***: Այդ միջոցներն ու ընթացակարգերը սահմանված լինելով օրենքներով՝ իրավաբանական նշանակություն ունեցող համապատասխան դեպքերի, փաստերի առկայության պարագայում նախատեսում են անձի խախտված իրավունքների դատական կարգով պաշտպանության կոնկրետ ձևեր ու եղանակներ:

Քննարկվող համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով վերապահված իր իրավունքի շրջանակներում՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության և լուծման առանձնահատկություններից:

Սահմանադրական դատարանը վերոնշյալ՝ ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *դատական (այդ թվում՝ սահմանադրական-դատական) պաշտպանության իրավունքը և դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, որովհետև դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և օրենքով*

նախատեսված) գործընթացներ և պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով:

Միաժամանակ, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների քննության մերժման հիմքերին, մասնավորապես՝ ակնհայտ անհիմն դիմումներին, արձանագրել է հետևյալը. **«Ակնհայտ անհիմն են նաև այն դիմումները, երբ նույն դիմողը միևնույն «հիմնավորումներով» և «փաստարկներով» վիճարկում է այն նույն դրույթի սահմանադրականությունը, որի հիման վրա գործի քննության ընդունումը մերժվել կամ արդեն իսկ ընդունվել է քննության սահմանադրական դատարանի կողմից»:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ **Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու իրավունքը, չի ենթադրում միևնույն հիմնավորումներով և փաստարկներով նույն դատական գործի շրջանակներում կիրառված նույն դրույթի սահմանադրականության վիճարկման վերաբերյալ բազմաթիվ դիմումների ներկայացման հնարավորություն՝ այն պարագայում, երբ դրա քննության վերաբերյալ արդեն իսկ առկա է Սահմանադրական դատարանի դատական կազմի կամ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշում:**

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողի կողմից միևնույն՝ թիվ ՎԴ/7257/05/14 վարչական գործով Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի և Որոշման 14-րդ կետի «ա» ենթակետի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, **սահմանադրականության վիճարկման վերաբերյալ անհատական դիմում Սահմանադրական դատարան մուտքագրվել է նաև 2022 թվականի սեպտեմբերի 14-ին:** Տվյալ անհատական դիմումի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատական կազմը 2022 թվականի հոկտեմբերի 27-ին կայացրել է **««Հայնախագիծ» ԲԲԸ-ի անհատական դիմումով գործի քննու-**

թյունը մերժելու մասին» ՍԴԴԿՈ-61 որոշումը՝ դիմումի՝ ակնհայտ անհիմն լինելու հիմքով¹:

Այնուհետև՝ 2022 թվականին դեկտեմբերի 2-ին, Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Հայնախագիծ» ԲԲԸ-ի սույն անհատական դիմումը, որով **Դիմողի կողմից կրկին վիճարկվում է թիվ ՎԴ/7257/05/14 վարչական գործով իր նկատմամբ կիրառված՝ Օրենքի և Որոշման 14-րդ կետի «ա» ենթակետի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, սահմանադրականությունը:** Ավելին՝ տվյալ անհատական դիմումով դիմողը ներկայացնում է նույնաբովանդակ հիմնավորումներ և փաստարկներ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ սույն պարագայում ***նույն դիմողը միևնույն հիմնավորումներով և փաստարկներով վիճարկում է այն նույն դրույթների սահմանադրականությունը, որոնց հիման վրա գործի քննության ընդունումն արդեն իսկ մերժվել է Սահմանադրական դատարանի կողմից:***

Վերոգրյալի հիման Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **ենթակա է մերժման՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումի՝ ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

3.2. Դիմողի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

¹ Դիմողի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ առկա է Սահմանադրական դատարանի նաև մեկ այլ որոշում՝ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը՝ 2018 թվականի հունվարի 22-ի ՍԴԱՈ-1 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է հետևյալը. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոհիշյալ դիմումով գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով ենթակա է կարճման (...)» (որոշումը հասանելի է <https://www.concourt.am/decision/decisions/2018-hy-sdav-sdav-1.pdf> հղումով): Այնուամենայնիվ, քննարկվող համատեքստում տվյալ որոշումը վերաբերելի և կիրառելի չէ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:*

2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) Բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, **ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հերպայնում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:**

Սահմանադրական դատարանը փաստում է, որ **Սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր**, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ **վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննարկվող համատեքստում հաշվի առնելով դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ **վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ անհատական դիմումով դիմողը, ըստ էության, **վիճարկվող նորմերի հակասահմանադրականության վերաբերյալ որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում**, իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են **դատարանների, մասնավորապես՝ ՀՀ վերաքննիչ**

վարչական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը: Այս առումով կարևոր է փաստել, որ սույն գործով դիմողի նկատմամբ հնարավոր անբարենպաստ իրավական հետևանքներն առաջացել են թիվ ՎԴ/7257/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 20.06.2022 թվականին կայացրած որոշմամբ:

Քննարկվող համատեքստում Սահմանադրական դատարանը կարևոր է համարում վկայակոչել դիմողի ներկայացրած հետևյալ դիրքորոշումը. «Վերաքննիչ դատարանը, անտեսելով նշված հանգամանքը, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից 21.06.2012 թվականին տրված թիվ 18 պաշտոնեական պարզաբանման 2-րդ կետը, գտել է, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին արյանի թիվ ԸԻԴ/0624/02/10 քաղաքացիական գործով 26.08.2010 թվականին կայացված դատական ակտով արձանագրված փաստն այն մասին, որ այդ գործով վիճարկվող պայմանագիրն առոչինչ է, չէր կարող որևէ բացասական ազդեցություն ունենալ Ընկերության կողմից պարտքն անհուսալի ճանաչելու և դուրս գրելու առումով: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերության կողմից պարտքն անհուսալի ճանաչելու և դուրս գրելու համար անհրաժեշտ է ոչ թե դատարանի ցանկացած վճիռ, այլ՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ կայացված վճիռ»:

Դիմողը նաև նշել է. «Վճռաբեկ դատարանի վերոնշյալ մոտեցումը սահմանադրաիրավական տեսանկյունից անընդունելի է, քանի որ քաղաքացու սեփականության իրավունքը սահմանափակվում է առանց որևէ լեգիտիմ նպատակի առկայության: Անձին (հարկային) պարտավորության ենթարկելը ենթադրում է ոչ իրավաչափ արարքի և մեղքի առկայություն, որի արդյունքում վրա են հասնում որոշակի բացասական հետևանքներ կամ առնվազն ստեղծվում է դրա վրանգը: Սույն դեպքում Դիմողի կողմից վերոնշյալ նախապայմաններից որևէ մեկը չի իրականացվել: Ավելին, Դիմողը տվյալ պարագայում համապատասխան գումարը ներառել է իր համախառն եկամտի մեջ և վճարել է հարկերը»:

Միաժամանակ, դիմողը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Վերոնշյալի լույսի ներքո, օրենսդիր և գործադիր իշխանությունները՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության N 2052-Ն որոշման 14-րդ կետի «ա» ենթակետի միջոցով սահմանել են համապատասխան ընթացակարգեր՝ համախառն եկամտից անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքը նվազեցնելու և այդպիսով անհարկի չհարկվելու ընթացակարգը: Վճարել դատարանը, սակայն, վերոգրյալում ներկայացված իրավակիրառ պրակտիկայում տրված իր մեկնաբանությամբ շեղվել է օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից սահմանված արդյունավետ ընթացակարգից՝ ըստ էության սահմանելով, որ «Գումարի բռնագանձման վերաբերյալ վճիռ է համարվում ցանկացած վճիռ, բացառությամբ եթե վճռի արդյունքում գործարքը ճանաչվում է առոչինչ»»:

Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես արդեն վկայակոչվել է, Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել **բացառապես նորմատիվ ակտի, ինչպես նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը: Մինչդեռ**, սույն դիմումով ներկայացված դիրքորոշումներով և հիմնավորումներով բարձրացվում են համապատասխան դատական ակտով դիմողի նկատմամբ կիրառված դրույթների **կիրառման իրավաչափությանն առնչվող հարցեր, որոնց քննարկումը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև դիմումին կից ներկայացված՝ թիվ ՎԴ/7257/05/14 վարչական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն պարագայում **դիմողը, ձևականորեն վիճարկելով** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի և Որոշման 14-րդ կետի «ա» ենթակետի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ**

դրույթների կիրառման իրավաչափության հարց, որը դիմողը քողարկել է նշված դրույթների սահմանադրականությունը վիճարկելու միջոցով:

Ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **ենթակա է մերժման նաև՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցերի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

««Հայնախագիծ» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 2052-Ն որոշման 14-րդ կետի «ա» ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

26 դեկտեմբերի 2022 թվականի
ՍԴԱՌ-215



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ